ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

Հ Ր Ա Մ Ա Ն Ը

«10» մարտի 2016 թվականի № 31-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 29.02.2016 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 200005 «ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի ու ՀՀ Կառավարության 30.07.2015 թվականի N839-Ա որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ԱՏԳ Սթոուն» ՍՊ ընկերության 02.03.2016 թվականի թիվ 03/2016 գրությունն ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության պետ-Հայաստանի Հանրապետության ընդերքի գլխավոր պետական տեսուչի 09.03.2016 թվականի զեկուցագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Ընդունման պահից չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 29.02.2016 թվականի թիվ 200005 «ստուգում անցկացնելու մասին» հանձնարարագիրը:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԼԵՎՈՆ ՅՈԼՅԱՆ

Mar 10 2016 3:35 PM